

Ուսման վարկի տրամադրման համար պահանջվող փաստաթղթերի ցանկ

- Դիմողի անձը հաստատող փաստաթուղթ,
- Դիմողի հանրային ծառայությունների համարանիշ,
- Ուսանողի անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
- Տեղեկանք ուսումնական հաստատությունից, որում պետք է նշված լինեն ուսանողի անուն ազգանունը, ֆակուլտետը և կուրսը, ուսանողի կիսամյակային/տարեկան վարձի չափը, ուսումնական հաստատության բանկային հաշվի ռեկվիզիտները: Սույն տեղեկանքը տրամադրվում է ուսումնական հաստատության հաշվապահության կողմից,
- Այն դեպքում, երբ ուսման վարկի գումարը գերազանցում է 500,000 ՀՀ դրամը, անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք աշխատանքի վայրից և/կամ եկամուտները հավաստող այլ փաստաթղթեր*, որոնցում պետք է նշված լինեն հաճախորդի մաքուր ամսական աշխատավարձի/եկամտի չափը՝ հարկերը վճարելուց հետո: Եթե հաճախորդը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ կամ ծավալում է համապատասխան կարգով արտոնագրված գործունեություն, ապա որպես եկամուտները հավաստող փաստաթուղթ հաճախորդը Բանկին է ներկայացնում նաև հարկային հաշվետվությունները և իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հիմնադիր փաստաթղթերը և դրանց պատճենը,
- Երաշխավորություն պահանջվելու դեպքում՝ երաշխավորի անձը հաստատող փաստաթուղթ,
- Գրավ պահանջվելու դեպքում՝ առաջարկվող գրավի սեփականությունը հաստատող փաստաթղթեր և գրավատուների անձը հաստատող փաստաթղթի պատճենները:

*Տեղեկանքը պետք է պարունակի աշխատանքի վայրի հասցեն, հեռախոսահամարներ, տեղեկանքը տվող կազմակերպության ղեկավարի ստորագրությունը, հնարավորության դեպքում նաև ՀՎՀՀ-ն, ելքի համար, տրման ամիս, ամսաթիվ: